

«Պինդ վառելիքով աշխատող կաթսաների էկոնախագծմանը**ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի****2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 թվականի****ապրիլի 28-ի 2015/1189 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)****(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Էներգասպառող արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանող շրջանակ ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

2009/125/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված Խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո,

քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգով Հանձնաժողովից պահանջվում է սահմանել էկոնախագծման պահանջներ Էներգասպառող այն արտադրանքի համար, որն ունի իրացման եւ ապրանքաշրջանառության մեծ ծավալներ, նշանակալից ազդեցություն է գործում շրջակա միջավայրի վրա եւ մեծ ներուժ ունի շրջակա միջավայրի վրա ավելի քիչ ազդեցություն ունենալու առումով՝ չառաջացնելով չափազանց մեծ ծախսեր.
- 2) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածով նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի եւ 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչների համաձայն, ինչպես նաեւ Խորհրդատվական ֆորումում

¹ ՊՏ L 285, 31.10.2009 թ., էջ 10:

քննարկումներից հետո Հանձնաժողովը պետք է անհրաժեշտության դեպքում կիրարկումն ապահովող միջոցառումներ ներկայացնի ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետ կրճատման մեծ հնարավորություն ընձեռող այն արտադրատեսակների համար, ինչպիսիք են տաքացնող սարքավորումները, այդ թվում՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաները եւ պինդ վառելիքով աշխատող կաթսաների, լրացուցիչ տաքացուցիչների, ջերմակարգավորիչ սարքերի եւ արեւային սարքերի փաթեթները.

- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություն՝ տնային տնտեսություններում եւ առետրային նպատակներով սովորաբար օգտագործվող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերը վերլուծելու համար: Ուսումնասիրությունը կատարվել է Միության եւ երրորդ երկրների շահառուների եւ շահագրգիռ կողմերի հետ համատեղ, եւ արդյունքները հասանելի են դարձել հանրության համար.
- 4) սույն կանոնակարգի նպատակներով կարելու համարվող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների բնապահպանական հայեցակետերը շահագործման փուլում էներգասպառումն է եւ շահագործման փուլում պինդ մասնիկների (փոշու), օրգանական գազային միացությունների, շմոլ գազի եւ ազոտի օքսիդների արտանետումն է: Ակնկալվում է, որ պինդ վառելիքով աշխատող կաթսաների տարեկան էներգասպառումը 2030 թվականին կկազմի 530 պետաջողով (ՊՋ) (մոտավորապես 12,7 մլն տոննա նավթին համարժեք մլն.տոն) ինչպես նաեւ ակնկալվում է, որ 2030 թվականին տարեկան արտանետումները կկազմեն 25 կիլոտոննա պինդ մասնիկներ (կտ), 25 կտ օրգանական գազային միացություններ եւ 292 կտ շմոլ գազ: Ակնկալվում է, որ կբարձրանա ազոտի օքսիդների արտանետման աստիճանը պինդ վառելիքով աշխատող՝ հնարավոր նոր կաթսաների պատճառով, որոնք պետք է ունենան ավելի բարձր էներգաարդյունավետություն եւ ավելի

- քիչ օրգանական արտանետումներ: Նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շահագործման փուլում պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգասպառումը եւ արտանետումները կարելի է էապես նվազեցնել.
- 5) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009/125/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված արտադրատեսակների էկոնախագծման պարամետրերին ներկայացվող լրացուցիչ պահանջները պարտադիր չեն պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում: Մասնավորապես, դիօքսինի եւ ֆուրանի արտանետումները էական չեն համարվում.
- 6) բացառապես խմելու տաք եւ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջուր ապահովող ջերմարտադրող կաթսաները, տաքացման եւ գազային ջերմակրի փոխանցման համար նախատեսված կաթսաները, էլեկտրաէներգիա եւ 50 կՎտ կամ ավել էլեկտրական հզորություն ունեցող՝ համակցված ջերմարտադրությամբ կաթսաներն ունեն հատուկ տեխնիկական բնութագրիչներ, եւ հետեւաբար Կանոնակարգը չպետք է տարածվի դրանց վրա: Կանոնակարգը չի տարածվում ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթսաների վրա, քանի որ ներկայումս ամբողջ Եվրոպայում առկա են ոչ բավարար տեղեկություններ՝ դրանց էկոնախագծմանը ներկայացվող պահանջներին համապատասխան մակարդակներ սահմանելու համար, եւ դրանք հետագայում կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ինչպիսիք են ֆուրանը եւ դիօքսինի արտանետումները: Ոչ փայտային կաթսաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանելու նպատակահարմարությունը կվերազնահատվի սույն կանոնակարգը վերանայելու ընթացքում.
- 7) պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգասպառումը եւ արտանետումները կարող են նվազեցվել՝ կիրառելով առկա չարտոնագրված

տեխնոլոգիաները եւ չավելացնելով այդ արտադրատեսակների գնման եւ շահագործման հետ կապված ընդհանուր ծախսերը.

- 8) ակնկալվում է, որ մինչեւ 2030 թվականը սույն կանոնակարգով եւ Հանձնաժողովի թիվ 2015/1187¹ (ԵՄ) պատվիրակված կանոնակարգով⁽¹⁾ սահմանված՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջների համատեղ ազդեցության արդյունքում էներգախնայողությունը կկազմի տարեկան մոտավորապես 18 ՊՋ (մոտավորապես 0,4 մլն.տնհ)՝ ածխաթթու գազի (CO₂) համապատասխան արտանետումների մոտավորապես 0,2 մլն տոննա նվազման եւ պինդ մասնիկների 10 կտ, օրգանական գազային միացությունների 14 կտ ու եւ շմուլ գազի 130 կտ նվազման հետ միասին.
- 9) էկոնախագծման պահանջների շնորհիվ պետք է ներդաշնակեցվեն պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգասպառման եւ արտանետումների մասով պահանջները Միության ողջ տարածքում՝ ներքին շուկայում ավելի լավ գործունեություն ապահովելու եւ այդ արտադրատեսակների բնապահպանական ցուցանիշները բարելավելու համար.
- 10) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները չպետք է վերջնական սպառողի տեսանկյունից ներազդեն պինդ վառելիքով աշխատող կաթսաների ֆունկցիոնալ հատկությունների եւ մատչելիության վրա եւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության եւ շրջակա միջավայրի վրա.
- 11) էկոնախագծման պահանջների ներդրման դեպքում արտադրողներին պետք է իրենց արտադրանքը սույն կանոնակարգին համապատասխան վերանախագծելու համար բավարար ժամանակ տրամադրել: Ժամկետը որոշելիս պետք է հաշվի առնվի արտադրողների ծախսերի վրա դրա

¹ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 2015/1187 (ԵՄ) կանոնակարգ, որով լրացվում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/75/ԵՄ հրահանգը՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգապիտակավորման եւ պինդ վառելիքով աշխատող կաթսաների փաթեթների, լրացուցիչ տաքացուցիչների, լրացուցիչ տաքացուցիչների եւ արեային սարքերի մասով (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 43-րդ էջը):

ունեցած ազդեցությունը, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների դեպքում՝ միեւնույն ժամանակ ապահովելով սույն կանոնակարգի նպատակների՝ ժամանակին իրականացումը.

- 12) արտադրանքի պարամետրերը պետք է չափվեն եւ հաշվարկվեն՝ օգտագործելով հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որտեղ հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների, ներառյալ հնարավորության դեպքում՝ Հանձնաժողովի պահանջով եվրոպական ստանդարտացման կազմակերպությունների կողմից ընդունված եւ ներդաշնակեցված չափորոշիչների վրա՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1025/2012 (ԵՄ) կանոնակարգով սահմանված ընթացակարգերի համաձայն¹.
- 13) 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ սույն կանոնակարգով սահմանվում են, թե համապատասխանության գնահատման որ ընթացակարգերն են կիրառելի: Չնայած նպատակահարմար է երրորդ կողմի հավաստագրումը վերանայել այն ժամանակ, երբ դա պահանջվում է Հանձնաժողովի թիվ 813/2013 կանոնակարգով (ԵՄ)², ցանկալի չէ եւ ոչ էլ իրատեսական է նախքան էկոնախագծմանը ներկայացվող պահանջներն ուժի մեջ մտնելը պինդ վառելիքով աշխատող կաթսաների համապատասխանության գնահատման մասով փոփոխություններ կատարել.
- 14) համապատասխանության մասով ստուգումները դյուրացնելու նպատակով արտադրողները պետք է տրամադրեն 2009/125/ԵՀ հրահանգի IV եւ V հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում

¹ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «Եվրոպական ստանդարտացման մասին» 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 316, 14.11.2012թ., էջ 12):

² Սենքի տաքացուցիչների և և համակացված տաքացուցիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 2-ի թիվ 811/2013 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 239, 6.9.2013թ., էջ 136):

պարունակվող տեղեկություններն այնքանով, որքանով այդ տեղեկություններն առնչվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.

- 15) հետագայում պինդ վառելիքով աշխատող կաթսաների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը սահմանափակելու համար արտադրողները պետք է տեղեկություններ տրամադրեն դրանց քանդման, վերամշակման կամ դուրսգրման մասին.
- 16) ի լրումն սույն կանոնակարգով սահմանված պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջների՝ գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների համար պետք է սահմանվեն կողմնորոշիչ հենանիշեր՝ ապահովելու պինդ վառելիքով աշխատող կաթսաների շահագործման ժամկետի ընթացքում դրանց վերաբերյալ տեղեկությունների հեշտ հասանելիությունը և մատչելիությունը.
- 17) սույն կանոնակարգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Չհակասելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/75/ԵՄ հրահանգին¹ սույն կանոնակարգով սահմանվում են 500 կիլովատ (կՎտ) կամ ավելի քիչ անվանական ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող

¹ «Արդյունաբերական արտանետումների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 24-ի 2010/75/ԵՀ հրահանգ (աղտոտման միասնական կանխում և վերահսկում) (ՊՏ L 334, 17.12.2010թ., էջ 17):

կաթսաները, այդ թվում՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաների փաթեթներում ներառված կաթսաները, լրացուցիչ տաքացուցիչները, ջեմրակարգավորիչ սարքերը եւ արեւային սարքերը շուկայահանելու եւ շահագործելու մասով էկոնախազձմանը ներկայացվող պահանջները, ինչպես սահմանված է 2015/1187 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի 2-րդ հոդվածով:

2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

- ա) միայն խմելու տաք կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի մատակարարման նպատակով ջերմություն արտադրող կաթսաներ,
- բ) կաթսաներ՝ նախատեսված այնպիսի գազային ջերմակրի տաքացման եւ փոխանցման համար, ինչպիսին գոլորշին կամ օդն է,
- գ) առավելագույնը 50 կՎտ կամ ավելի էլեկտրական հզորություն ունեցող՝ համակցված ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող կաթսաներ,
- դ) ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթսաներ:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2009/125/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- 1) «պինդ վառելիքով աշխատող կաթսա» նշանակում է սարք, որը համալրված է պինդ վառելիքով աշխատող մեկ կամ ավելի ջերմագեներատորներով եւ ապահովում է ջերմությունը ջրային կենտրոնական ջեռուցման համակարգում, որպեսզի հնարավոր լինի հասնել եւ պահպանել մեկ կամ մի մի քանի փակ տարածքների ներսենյակային ջերմության պահանջված

աստիճանի՝ շրջակա միջավայրում ոչ ավելի, քան 6 տոկոս անվանական ջերմարտադրության կորստով.

- 2) «ջրային կենտրոնական ջեռուցման համակարգ» նշանակում է համակարգ, որը որպես ջերմակիր օգտագործում է ջուրը, որպեսզի կենտրոնական համակարգում արտադրված ջերմությունը փոխանցի ջերմանջատող սարքերին՝ շենքերում գտնվող փակ տարածությունների կամ դրանց մասերի ջեռուցման համար, այդ թվում՝ շենքային կամ կենտրոնական թաղամասային ջեռուցման ցանցերին.
- 3) «պինդ վառելիքով աշխատող կաթսայի ջերմագեներատոր» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որը պինդ վառելիքի այրմամբ արտադրում է ջերմություն.
- 4) «անվանական ջերմարտադրություն» կամ «Pr» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաների հայտարարված ջերմատվություն, որը կիրվատտով արտահայտված նախընտրելի վառելիքով ապահովում է փակ տարածությունների տաքությունը.
- 5) «պինդ վառելիք» նշանակում է վառելիք, որը պինդ է սովորական սենյակային ջերմաստիճանում, այդ թվում՝ պինդ կենսազանգված եւ պինդ հանածո վառելիք.
- 6) «կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսական (ներառյալ՝ բուսական եւ կենդանական ծագման նյութերը), անտառային տնտեսության եւ հարակից արդյունաբերությունների, այդ թվում՝ ձկնաբուծության եւ ջրային տնտեսության կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների եւ մնացորդների, ինչպես նաեւ արդյունաբերական եւ քաղաքային թափոնների կենսաբանորեն քայքայվող մասը.
- 7) «փայտային կենսազանգված» նշանակում է կենսազանգված, որն առաջացել է ծառերից, թփերից ու թփիկներից, այդ թվում՝ գերանները, փայտի տաշեղները, պելետների տեսքով սեղմված փայտը, բրիկետների տեսքով սեղմված փայտը եւ փայտաթեփը.

- 8) «ոչ փայտային կենսազանգված» նշանակում է փայտային կենսազանգվածից տարբերվող կենսազանգված, այդ թվում՝ ծղոտ, միսկանտուս, եղեգ, կորիզներ, հատիկներ, ձիթապտղի կորիզ, ձիթապտղի քուսպ եւ ընկույզի կեղեւ.
- 9) «հանածո վառելիք» նշանակում է կենսազանգվածից տարբերվող վառելիք, այդ թվում՝ անթրացիտ, գորշ ածուխ, կոքս, բիտումային ածուխ. սույն կանոնակարգի նպատակներով այն նաեւ ներառում է տորֆ.
- 10) «կենսազանգվածով աշխատող կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որի համար, որպես նախընտրելի վառելիք, օգտագործվում է կենսազանգված.
- 11) «ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթսա» նշանակում է կենսազանգվածով աշխատող կաթսա, որի համար, որպես նախընտրելի վառելիք, օգտագործվում է ոչ փայտային կենսազանգված, եւ որի համար փայտային կենսազանգվածը, հանածո վառելիքը կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի խառնուրդը թվարկված չեն դրա համար հարմար այլ վառելիքների շարքում.
- 12) «նախընտրելի վառելիք» նշանակում է պինդ վառելիքի այն միակ տեսակը, որը նախընտրելի է կաթսայի համար օգտագործել մատակարարի հրահանգների համաձայն.
- 13) «վառելիքի այլ համապատասխան տեսակներ» նշանակում է նախընտրելի վառելիքից տարբերվող պինդ վառելիք, որը արտադրողի ցուցումների համաձայն կարող է օգտագործվել պինդ վառելիքով աշխատող կաթսայի մեջ եւ ներառում է վառելիքի ցանկացած տեսակ, որը նշված է տեղադրողների եւ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկում, արտադրողների ազատ հասանելիության կայքերում, տեխնիկական կամ գովազդային-քարոզչական նյութերում եւ գովազդներում.

- 14) «համակցված ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որն ունի միաժամանակ ջերմություն եւ էլեկտրաէներգիա արտադրելու հնարավորություն.
- 15) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն» կամ «դ» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսայի դեպքում նախատեսված ջեռուցման սեզոնի համար սենքի տաքացման պահանջարկի եւ այդ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ տարեկան էներգասպառման միջեւ հարաբերակցություն՝ արտահայտված տոկոսով.
- 16) «պինդ մասնիկ» նշանակում է տարբեր ձեւեր, կառուցվածքներ եւ խտություն ունեցող մասնիկներ, որոնք ցրված են վառելիքային գազի գազային ֆազում:

II-V հավելվածների նպատակներով լրացուցիչ սահմանումները սահմանված են I հավելվածում:

Հոդված 3

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները եւ ժամանակացույցը

1. Պինդ վառելիքով աշխատող կաթսաներին ներկայացվող էկոնախագծման պահանջները սահմանված են II հավելվածում:
2. Պինդ վառելիքով աշխատող կաթսաները պետք է բավարարեն II հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված պահանջները 2020 թվականի հունվարի 1-ից:
3. Էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում եւ հաշվարկվում է II հավելվածում սահմանված մեթոդներին համապատասխան:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը տվյալ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ տվյալ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:
2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերը պարունակում են սույն կանոնակարգի II հավելվածի 2(գ) կետով սահմանված տեղեկությունները:

Հոդված 5

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանության համար անդամ պետությունները 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության ստուգումներն իրականացնելիս կիրառում են սույն կանոնակարգի IV հավելվածում նկարագրված ստուգման ընթացակարգը:

Հոդված 6

Կողմնորոշիչ հենանիշերը

V հավելվածով սահմանվում են սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա լավագույնս պինդ վառելիքով աշխատող կաթսաների կողմնորոշիչ հենանիշերը:

Հոդված 7

Վերանայումը

1. Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը եւ այդ վերանայման արդյունքը Խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ը: Մասնավորապես, վերանայմամբ գնահատվում է, թե արդյոք անհրաժեշտություն կա՝

- ա) ներառելու մինչեւ 1 000 կիլովատտ անվանական ջերմարտադրություն ունեցող՝ պինդ վառելիքով աշխատող կաթսաներ,
- բ) ներառելու ոչ փայտային կենսազանգվածով աշխատող կաթսաներ՝ աղտոտիչ արտանետումների հատուկ տեսակների համար էկոնախագծմանը ներկայացվող պահանջներով,
- գ) սահմանելու առավել խիստ էկոնախագծման պահանջներ 2020 թվականից հետո պինդ մասնիկների, օրգանական գազային միացությունների եւ շմոլ գազի էներգաարդյունավետության եւ արտանետումների համար, եւ
- դ) տարբերակելու ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները:

2. Հանձնաժողովը վերանայում է, թե արդյոք անհրաժեշտ է պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում երրորդ կողմի հավաստագրում ներդնել եւ Խորհրդակցական ֆորում ներկայացնել այդ վերանայման արդյունքները ոչ ուշ, քան մինչեւ 2018 թվականի օգոստոսի 22-ը:

Հոդված 8

Անցումային դրույթը

Մինչեւ 2020 թվականի հունվարի 1-ն անդամ պետությունները կարող են թույլ տալ պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների շուկայահանումը եւ շահագործումը, որոնք համապատասխանում են սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության, պինդ մասնիկների, օրգանական գազային

միացությունների, շնու գազի եւ ազոտի օքսիդների արտանետումների վերաբերյալ գործող ներպետական դրույթներին:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի ապրիլի 28-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ՅՈՒՆԿԵՐ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-V հավելվածների համար կիրառելի սահմանումները**

II-V հավելվածների նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

- 1) «սենքի սեզոնային ջեռուցման հետեւանքով առաջացած արտանետումներ» նշանակում է՝
 - ա) անվանական ջերմարտադրության ժամանակ արտանետումների միջին մեծություն է 30 % անվանական ջերմարտադրության ժամանակ մգ/մ³-ով արտահայտված արտանետումներ՝ ավտոմատ բեռնվող, պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար,
 - բ) արտանետումների միջին մեծություն է 50 % անվանական ջերմարտադրության ժամանակ մգ/մ³-ով արտահայտված արտանետումներ ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են շարունակաբար շահագործվել 50 % անվանական ջերմարտադրությամբ,
 - գ) անվանական ջերմարտադրության ժամանակ մգ/մ³-ով արտահայտված արտանետումներ ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար գործարկվել 50 % կամ պակաս անվանական ջերմարտադրությամբ,
 - դ) անվանական ջերմարտադրության ժամանակ մգ/մ³-ով արտահայտված արտանետումներ՝ համակցված ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար.
- 2) «հանածո վառելիքով աշխատող կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որը, որպես նախընտրելի վառելիք, ունի հանածո վառելիք կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի խառնուրդ.

- 3) «պինդ վառելիքով աշխատող կաթսայի կորպուս» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսայի մաս, որը նախատեսված է պինդ վառելիքով աշխատող կաթսայի ջերմագեներատորը հարմարեցնելու համար.
- 4) «մոդելի նույնականացուցիչ» նշանակում է սովորաբար տառաթվային ծածկագիր, որով պինդ վառելիքով աշխատող կաթսայի որոշակի մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ արտադրողի անվանմամբ այլ մոդելներից.
- 5) «կոնդենսացիոն կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որում շահագործման նորմալ պայմաններում եւ շահագործման պայմաններում ջրի տվյալ ջերմաստիճանի դեպքում ջրային գոլորշին այրման արգասիքներում մասամբ կոնդենսացվում է, որպեսզի տաքացման նպատակներով օգտագործվի այդ ջրային գոլորշու տեսակարար ջերմությունը.
- 6) «համակցված կաթսա» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսա, որը նախատեսված է նաեւ կոնկրետ ժամանակահատվածներում կոնկրետ ջերմաստիճանային մակարդակով, քանակով եւ հոսքի արագությամբ խմելու տաք ջրի կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի մատակարարման նպատակով ջերմություն հաղորդելու համար եւ միացված է խմելու կամ կոմունալ-կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի մատակարարման արտաքին աղբյուրին.
- 7) «փայտային այլ կենսազանգված» նշանակում է փայտյա կենսազանգված՝ բացառությամբ 25 % կամ պակաս խոնավության պարունակությամբ գերանի, 15 % կամ ավելի խոնավության պարունակությամբ փայտի տաշեղների, պելետների եւ բրիկետների տեսքով սեղմված փայտի կամ 50 %-ին հավասար կամ պակաս խոնավության պարունակությամբ փայտաթեփի.

- 8) «խոնավության պարունակություն» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսայում օգտագործվող վառելիքի ընդհանուր զանգվածի նկատմամբ վառելիքում պարունակվող ջրի զանգվածը.
- 9) «այլ հանածո վառելիք» նշանակում է հանածո վառելիք, որը տարբերվում է բիտումային ածխից, գորշ ածխից (այդ թվում՝ բրիկետներ), գետնածխից, կոքսից, անտրացիտից կամ խառնված հանածո վառելիքի բրիկետներից.
- 10) «էլեկտրաարդյունավետություն» կամ « η » նշանակում է էլեկտրաէներգիայի արտադրության եւ համակցված ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը, որն արտահայտվում է %-ով, ընդ որում, էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱՋԱ-ով* եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած *ՓԳ-ով*.
- 11) «այրման ջերմատվության արժեք» կամ «ԱՋԱ» նշանակում է համապատասխան խոնավություն պարունակող վառելիքի միավորի կողմից անջատված ընդհանուր ջերմաքանակը, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, եւ երբ այրման արգասիքների ջերմաստիճանը չի վերադառնում շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում առկա ցանկացած ջրածնի այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացված ջերմությունը.
- 12) «փոխարկման գործակից» կամ «ՓԳ» նշանակում է գործակից, որն արտացոլում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՃ հրահանգում նշված՝ ԵՄ-ում էլեկտրաէներգիայի արտադրության օգտակար գործողության միջին գործակցի գնահատված 40%-ը¹. փոխարկման գործակցի արժեքն է $\Phi\Gamma = 2,5$.

¹ «Էներգախնայողության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՃ հրահանգը, որով փոփոխություններ են կատարվում 2009/125/ԵՃ եւ 2010/30/ԵՄ հրահանգներում եւ ուժը կորցրած են ճանաչվում 2004/8/ԵՃ եւ 2006/32/ԵՃ հրահանգները (ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1):

- 13) «Էլեկտրաէներգիային ներկայացվող պահանջները առավելագույն ջերմարտադրության ժամանակ» կամ «el_{տալ}» նշանակում է անվանական ջերմարտադրության դեպքում պինդ վառելիքով աշխատող կաթսաների էլեկտրաէներգիայի սպառում, որն արտահայտված է կՎտ-ով՝ բացառությամբ երկդիրքային տաքացուցչի եւ արտանետումների նվազեցման նպատակով կիրառվող երկրորդական սարքավորումների դեպքում էլեկտրականության սպառման.
- 14) «Էլեկտրաէներգիային ներկայացվող պահանջները նվազագույն ջերմարտադրության ժամանակ» կամ «el_{տալ}» նշանակում է կիրառվող մասնակի բեռնվածության ժամանակ պինդ վառելիքով աշխատող կաթսաների էլեկտրաէներգիայի սպառում, որն արտահայտված է կՎտ-ով՝ բացառությամբ երկդիրքային տաքացուցչի եւ արտանետումների նվազեցման նպատակով կիրառվող երկրորդական սարքավորումների դեպքում էլեկտրականության սպառման;
- 15) «երկդիրքային տաքացուցիչ» նշանակում է ըստ Ջոուլի օրենքի էլեկտրական դիմադրություն ունեցող տարր, որը ջերմություն է արտադրում միայն այն նպատակով, որ պինդ վառելիքով աշխատող կաթսաները կամ ջրային կենտրոնական ջեռուցման համակարգը չսառչեն, կամ այն դեպքում, երբ ջերմության արտաքին աղբյուրների մատակարարումը խաթարվել է կամ խափանվել է (այդ թվում՝ պահպանման ժամանակահատվածում).
- 16) «կիրառվող մասնակի բեռնվածություն» նշանակում է ավտոմատ բեռնվող, պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում 30 % անվանական ջերմարտադրություն, իսկ ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են շահագործվել 50 % ջերմարտադրությամբ՝ շահագործում՝ 50 % անվանական ջերմարտադրությամբ.
- 17) «սպասման ռեժիմում էլեկտրաէներգիայի սպառում» կամ «P_{տր}» նշանակում է սպասման ռեժիմում պինդ վառելիքով աշխատող կաթսաների

էլեկտրաէներգիայի սպառում՝ բացառությամբ կՎտ-ով արտահայտված արտանետումների նվազեցման նպատակով կիրառվող երկրորդական սարքավորումների.

- 18) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, երբ պինդ վառելիքով աշխատող կաթսան միացված է էլեկտրասնուցման ցանցին, նախատեսված ձեռով աշխատելու համար կախված է էլեկտրասնուցման ցանցից ստացվող էներգիայից եւ կատարում է միայն հետեւյալ գործառույթները, որոնք կարող են շարունակվել անորոշ ժամանակով՝ վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ՝ միայն վերաակտիվացման գործառույթի ակտիվացման նշումով, կամ տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում ցուցադրիչի վրա.
- 19) «սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունն ակտիվ ռեժիմում» կամ « η_{son} » նշանակում է՝
- ա) անվանական ջերմարտադրության ժամանակ օգտակար արդյունավետության հաշվարկված միջին մեծություն եւ 30 % նոմինալ ջերմարտադրության ժամանակ %-ով արտահայտված օգտակար արդյունավետություն՝ ավտոմատ բեռնվող, պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար,
 - բ) օգտակար արդյունավետության միջին մեծություն եւ 50 % անվանական ջերմարտադրության ժամանակ %-ով արտահայտված օգտակար արդյունավետություն ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք կարող են շարունակաբար շահագործվել 50 % անվանական ջերմարտադրությամբ,
 - գ) անվանական ջերմարտադրության ժամանակ %-ով արտահայտված օգտակար արդյունավետություն ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար շահագործվել 50 % կամ պակաս անվանական ջերմարտադրությամբ,

- դ) անվանական ջերմարտադրության ժամանակ %-ով արտահայտված օգտակար արդյունավետություն՝ համակցված ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար.
- 20) «օգտակար արդյունավետություն» կամ «*η*» նշանակում է օգտակար ջերմային հզորության եւ համակցված ջերմարտադրությամբ, պինդ վառելիքով աշխատող կաթսաների էներգիայի ընդհանուր սպառման հարաբերակցությունը, որն արտահայտվում է %-ով, ընդ որում, էներգիայի ընդհանուր սպառումն արտահայտվում է *ԱՋԱ-ով* եւ (կամ) վերջնական էներգիայով՝ բազմապատկած *Φ₉-ով*.
- 21) «օգտակար ջերմային հզորություն» կամ «*P*» նշանակում է պինդ վառելիքով աշխատող կաթսաների՝ ջերմակիր փոխանցվող ջերմարտադրություն, որն արտահայտվում է կՎտ-ով.
- 22) «ջերմակարգավորիչ սարք» նշանակում է սարք, որի միջոցով կապ է հաստատվում վերջնական սպառողների հետ՝ շենքի ներսում ցանկալի ջերմաստիճանի արժեքների եւ ժամանակացույցի մասով, եւ համապատասխան տվյալները հաղորդվում են պինդ վառելիքով աշխատող կաթսաների ինտերֆեյս, ինչպես օրինակ՝ կենտրոնական մշակիչ սարք՝ այսպիսով նպաստելով ներսում ջերմաստիճանի (ջերմաստիճանների) կարգավորմանը.
- 23) «այրման ջերմատվության արժեք» կամ «*ԱՋԱ_{արտնայն} խոնավ*» նշանակում է բնական խոնավություն չպարունակող վառելիքի մեկ լիցքից անջատված ընդհանուր ջերմությունը, երբ այդ վառելիքն ամբողջությամբ այրվում է թթվածնի հետ, եւ երբ այրման արգասիքները վերադառնում են շրջակա միջավայրի ջերմաստիճանին. այս քանակը ներառում է վառելիքում առկա ցանկացած ջրածնի այրման հետեւանքով առաջացած ջրային գոլորշու խտացված ջերմությունը.

- 24) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է II հավելվածի 1-ին կամ 2-րդ աղյուսակներում սահմանված տեխնիկական նույն պարամետրերով, ինչ միեւնույն արտադրողի կողմից շուկայահանված մեկ այլ մոդել:

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները****1. Էկոնախագծմանը ներկայացվող հատուկ պահանջները**

2020 թվականի հունվարի 1-ից պինդ վառելիքով աշխատող կաթսաները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

- ա) 20 կիլովատ կամ պակաս ջերմարտադրություն ունեցող կաթսաների դեպքում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 75 տոկոսից պակաս լինի,
- բ) 22 կիլովատից ավել ջերմարտադրություն ունեցող կաթսաների դեպքում տարածքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությունը չպետք է 77 տոկոսից պակաս լինի,
- գ) պինդ մասնիկների՝ սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած արտանետումները չպետք է գերազանցեն 40 մգ/մ³-ն ավտոմատ բեռնվող կաթսաների դեպքում եւ չպետք է գերազանցեն 60 մգ/մ³-ը ձեռքով բեռնվող կաթսաների դեպքում,
- դ) օրգանական գազային միացությունների՝ սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած արտանետումները չպետք է գերազանցեն 20 մգ/մ³-ն ավտոմատ բեռնվող կաթսաների դեպքում եւ չպետք է գերազանցեն 30 մգ/մ³-ը ձեռքով բեռնվող կաթսաների դեպքում,
- ե) շմոլ գազի՝ սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած արտանետումները չպետք է գերազանցեն 500 մգ/մ³-ն ավտոմատ բեռնվող կաթսաների դեպքում եւ չպետք է գերազանցեն 700 մգ/մ³-ը ձեռքով բեռնվող կաթսաների դեպքում,
- զ) ազոտի օքսիդների՝ սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած եւ ազոտի օքսիդի տեսքով արտահայտված

արտանետումները չպետք է գերազանցեն 200 մգ/մ³-ը կենսազանգվածով աշխատող կաթսաների դեպքում եւ չպետք է գերազանցեն 350 մգ/մ³-ը հանածո վառելիքով աշխատող կաթսաների դեպքում:

Պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում նախընտրելի վառելիքը եւ ցանկացած այլ համապատասխան վառելիք պետք է համապատասխանեն սույն պահանջներին:

2. Արտադրանքի վերաբերյալ տեղեկություններին ներկայացվող պահանջները

2020 թվականի հունվարի 1-ից պետք է տրամադրվի պինդ վառելիքով աշխատող կաթսաների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- ա) դրանք տեղադրողների եւ վերջնական սպառողների համար նախատեսված ցուցումների ձեռնարկներում, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում՝
- 1) III հավելվածին համապատասխան չափված եւ հաշվարկված տեխնիկական պարամետրերի հետ միասին 1-ին աղյուսակում ներառված տեղեկություններ, որոնք ցույց են տալիս աղյուսակում նշված էական արդյունքների թիվը,
 - 2) ցանկացած հատուկ նախազգուշական միջոց, որը պետք է ձեռնարկել պինդ վառելիքով աշխատող կաթսաների հավաքման, տեղադրման կամ պահպանման համար,
 - 3) պինդ վառելիքով աշխատող կաթսաները պատշաճ կերպով գործարկելու, ինչպես նաեւ նախընտրելի վառելիքին եւ ցանկացած այլ համապատասխան վառելիքի՝ որակի մասով ներկայացվող պահանջների վերաբերյալ ցուցումներ,

4) պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար նախատեսված՝ պինդ վառելիքով աշխատող ջերմագեներատորների եւ այդպիսի ջերմագեներատորներով սարքավորվող եւ պինդ վառելիքով աշխատող կաթսաների կորպուսների դեպքում դրանց բնութագրիչները, հավաքման մասով պահանջները (պինդ վառելիքով աշխատող կաթսաների էկոնախագծման պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով) եւ անհրաժեշտության դեպքում՝ արտադրողի կողմից առաջարկված միացությունների ցանկը.

բ) արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերի՝ մասնագետների համար նախատեսված հատվածի մասին՝ շահագործման ժամկետի ավարտից հետո քանդման, վերամշակման կամ դուրսգրման վերաբերյալ տեղեկություններ,

գ) տեխնիկական փաստաթղթերում՝ 4-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման նպատակով՝

1) «ա» եւ «բ» կետերում թվարկված տեղեկությունները,

2) կիրառելիության դեպքում համարժեք մոդելների ցանկը,

3) այն դեպքում, երբ 1-ին աղյուսակում նշված նախընտրելի վառելիք կամ այլ համապատասխան վառելիք է ծառայում այլ փայտային կենսազանգված, ոչ փայտային կենսազանգված, այլ հանածո վառելիք կամ կենսազանգվածի եւ հանածո վառելիքի այլ խառնուրդ՝ վառելիքի նկարագրությունը, որը բավարար է արտադրանքի միանշանակ նույնականացման համար, եւ վառելիքի տեխնիկական ստանդարտը կամ մասնագիրը, այդ թվում՝ չափված խոնավության պարունակությունը եւ չափված մոխրի պարունակությունը, իսկ այլ հանածո վառելիքի դեպքում՝ նաեւ վառելիքի չափված ցնդող նյութի պարունակությունը.

դ) էլեկտրական հզորությունը, որը չմաքրվող ձեռով մակնշված է պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների վրա:

«Գ» կետում նշված տեղեկությունները կարող են համակցված լինել 2010/30/ԵՄ հրահանգի համաձայն սահմանված միջոցներին համապատասխան տրամադրված տեխնիկական փաստաթղթերում:

Աղյուսակ 1

Պինդ վառելիքով աշխատող կաթսաների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պահանջները

Մոդելի նույնականացուցիչ (ներ)							
Բեռնման ռեժիմ՝ [Ձեռնարկ. կաթսաները պետք է շահագործվեն առնվազն x (*) լիտր/ավտոմատ ծավալով ունակային ջրատաքացուցչով. առաջարկվում է, որ կաթսան շահագործվի առնվազն x (**) լիտր/ավտոմատ ծավալով ունակային ջրատաքացուցչով]							
Կոնդենսացիոն կաթսա՝ [այո/ոչ]							
Պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսա [այո/ոչ]				Ջեռուցման եւ տաք ջրամատակարարման համար նախատեսված կաթսա՝ [այո/ոչ]			
Վառելիք	Նախընտրելի վառելիք (միայն մեկը)	Այլ համապատասխան վառելիք՝	ηs [x%].	Սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացող արտանետումներ (****)			
				ՊՄ	ՕԳՄ	CO	NOx
				[x] մգ/մ ³			
Գերան, ≤ 25 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Փայտի տաշեղներ, 15-35 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Փայտի տաշեղներ, > 35 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Պելետների եւ բրիկետների տեսքով սեղմված փայտ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Փայտաթեփ, < 50 % խոնավության պարունակությամբ	[այո/ոչ]	[այո/ոչ]					

Փայտային այլ կենսազանգված	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Ոչ փայտային կենսազանգված	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Բիտումային ածուխ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Գորշ ածուխ (այդ թվում՝ բրիկետներ)	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Կոքս	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Անտրացիտ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Հանածո վառելիքի խառնուրդների բրիկետներ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Այլ հանածո վառելիք	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Կենսազանգվածի եւ հանածո վառելիքի (30-70 %) բրիկետների խառնուրդ	[այո/ոչ]	[այո/ոչ]					
Կենսազանգվածի եւ հանածո վառելիքի այլ խառնուրդ	[այո/ոչ]	[այո/ոչ]					

Բնութագրերը միայն նախընտրելի վառելիքով աշխատելիս

Անվանումը	Պայմանանշանը	Արժեքը	Միավորը	Անվանումը	Պայմանանշանը	Արժեքը	Միավորը
Օգտակար ջերմային հզորություն				Օգտակար արդյունավետություն			
Անվանական ջերմարտադրության դեպքում	$P_n (***)$	x,x	կՎտ	Անվանական ջերմարտադրության դեպքում	η_n	x,x	%
[30 %/50 %] անվանական ջերմարտադրության դեպքում, եթե կիրառելի է	P_p	[x,x/առկա չէ]	կՎտ	[30 %/50 %] անվանական ջերմարտադրության դեպքում, եթե կիրառելի է	η_p	[x,x/առկա չէ]	%
Պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում՝ էլեկտրաարդյունավետություն				Օժանդակ էներգասպառում			
				Անվանական ջերմարտադրության դեպքում	$e_{l,տալ}$	x,xxx	կՎտ
Անվանական ջերմարտադրության դեպքում	$\eta_{t,n}$	x,x	%	[30 %/50 %] անվանական ջերմարտադրության դեպքում, եթե կիրառելի է	$e_{l,վազ}$	[x,xxx/առկա չէ]	կՎտ
				արտանետումների նվազեցման համար ներառված երկրորդական սարքավորումների		[x,xxx/առկա չէ]	կՎտ
				Սպասման ռեժիմում	$P_{տր}$	x,xxx	կՎտ

Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն:
*	Ցիստեռնի ծավալը = $45 \times P_r \times (1 - 2,7/P_r)$ կամ 300 լիտր՝ կախված նրանից, թե որն է ավելի բարձր՝ կՎտ-ով արտահայտված P_r -ով
**	Ցիստեռնի ծավալը = $20 \times P_r$ ՝ կՎտ-ով արտահայտված P_r -ով
***	Նախընտրելի վառելիքի համար P_n -ը հավասար է P_r -ի
****	PM = պինդ մասնիկներ, O ₃ = օրգանական գազային միացություններ, CO = շմոլ գազ, NO _x = ազոտի օքսիդ

ՀԱՎԵԼՎԱԾ III

Չափումները եւ հաշվարկները

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով իրականացվում են չափումներ եւ հաշվարկներ՝ օգտագործելով ներդաշնակեցված ստանդարտները, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ այլ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն 2-6-րդ կետերով սահմանված պայմաններին եւ տեխնիկական պարամետրերին:

2. Չափումների եւ հաշվարկների ընդհանուր պայմանները

- ա) Պինդ վառելիքով աշխատող կաթսաները փորձարկվում են II հավելվածի 1-ին աղյուսակում նշված նախընտրելի վառելիքի եւ ցանկացած այլ համապատասխան վառելիքի մասով՝ բացառությամբ այն դեպքի, երբ համարվում է, որ կիրառելի պահանջներին համապատասխանող՝ 35 %-ից ավելի խոնավության պարունակությամբ փայտի տաշեղների մասով փորձարկված կաթսաները նույնպես համապատասխանում են 15-35 % խոնավության պարունակությամբ փայտի տաշեղներին ներկայացվող այդպիսի պահանջներին եւ չի պահանջվում, որ դրանք փորձարկվեն 15-35 % խոնավության պարունակությամբ կոտրված փայտի տաշեղների մասով.
- բ) սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության եւ սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացող արտանետումների համար հայտարարված արժեքները կլորացվում են մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

- գ) պինդ վառելիքով աշխատող ցանկացած ջերմագեներատոր, որը նախատեսված է պինդ վառելիքով աշխատող կաթսայի համար եւ այդպիսի ջերմագեներատորով սարքավորված ցանկացած պինդ վառելիքով աշխատող կաթսա փորձարկվում է համապատասխան պինդ վառելիքով աշխատող կաթսայի կորպուսի եւ ջերմագեներատորի հետ միասին:

3. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար ընդհանուր պայմանները

- ա) Օգտակար արդյունավետության η_n , η_p արժեքները եւ օգտակար ջերմային հզորության P_n , P_p արժեքները չափվում են համապատասխանաբար: Պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում էլեկտրաարդյունավետության $\eta_{e..n}$ արժեքը նույնպես հաշվարկվում է.
- բ) սենքի սեզոնային ջեռուցման n_u էներգաարդյունավետությունը հաշվարկվում է որպես դժոռ ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային էներգաարդյունավետություն՝ շտկված ներդրումներով, որոնց համար հաշվի է առնվում ջերմաստիճանի վերահսկողությունը, օժանդակ էներգասպառումը, իսկ պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում՝ ավելացնելով էներգաարդյունավետությունը՝ բազմապատկած փոխարկման գործակիցներով՝ 2,5 ՓԳ-ով.
- գ) էլեկտրասպառումը բազմապատկվում է փոխարկման գործակցով՝ 2,5 ՓԳ-ով:

4. Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության համար հատուկ պայմանները

ա) Սենքի սեզոնային ջեռուցման η_u էներգաարդյունավետությունը սահմանվում է որպես՝

$$\eta_u = \eta_{son} - F(1) - F(2) + F(3)$$

որտեղ՝

- 1) η_{son} ն ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցն է, որն արտահայտված է տոկոսով եւ հաշվարկվում է այնպես, ինչպես սահմանված է 4-րդ կետի «բ» ենթակետով,
- 2) $F(1)$ -ը կազմում է սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության կորուստի մասը՝ շնորհիվ ջերմաստիճանի կարգավորման մասով ճշգրտված ներդրումների, $F(1) = 3 \%$
- 3) $F(2)$ -ը կազմում է լրացուցիչ էլեկտրաէներգիայի սպառման պատճառով սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով բացասական ներդրումների մասը, որն արտահայտված է տոկոսով եւ հաշվարկվում է այնպես, ինչպես սահմանված է 4-րդ կետի «գ» ենթակետով:
- 4) $F(3)$ -ը կազմում է պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների էլեկտրաարդյունավետության միջոցով սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության մասով դրական ներդրումի մասը, որն արտահայտված է տոկոսով եւ հաշվարկվում է հետեւյալ կերպ՝

$$F(3) = 2,5 \times \eta_{t,n}$$

բ) ակտիվ ռեժիմում սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետության գործակիցը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1) ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների դեպքում, որոնք կարող են շարունակաբար շահագործվել 50% անվանական ջերմարդյունավետությամբ, եւ ավտոմատ բեռնվող, պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում՝

$$\eta_{son} = 0,85 \times \eta_p + 0,15 \times \eta_n$$

2) ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար շահագործվել 50 % կամ պակաս անվանական ջերմարդյունավետությամբ եւ պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում՝

$$\eta_{son} = \eta_n$$

գ) F(2)-ը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1) ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների դեպքում, որոնք կարող են շարունակաբար շահագործվել 50 % անվանական ջերմարդյունավետությամբ եւ ավտոմատ բեռնվող, պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում՝

$$F(2) = 2,5 \times (0,15 \times el_{տնավ.} + 0,85 \times el_{սվազ.} + 1,3 \times P_{UN}) / (0,15 \times P_n + 0,85 \times P_p)$$

- 2) ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների համար, որոնք չեն կարող շարունակաբար գործարկվել 50 % անվանական ջերմարդյունավետությամբ եւ պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում՝

$$F(2) = 2,5 \times (e_{\text{տնավ.}} + 1,3 \times P_{\text{տ.}}) / P_n$$

5. Այրման ջերմատվության արժեքի հաշվարկումը

Այրման ջերմատվության արժեքը (ԱԱՋ) ձեռք է բերվում խոնավություն չպարունակող այրման ջերմատվության արժեքով (ԱԱՋ_{խոնավ. չպ.})՝ կիրառելով հետեւյալ փոխարկումը՝

$$ԱԱՋ = ԱԱՋ_{\text{խոնավ. չպ.}} \times (1 - M)$$

որտեղ՝

- ա) ԱԱՋ-ն եւ ԱԱՋ_{խոնավ. չպ.}-ն արտահայտված են մեգաջոուլ/կիլոգրամով,
- բ) M-ն վառելիքի խոնավության պարունակությունն է՝ արտահայտված որպես դրա մի մաս:

6. Սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած արտանետումները

- ա) Պինդ մասնիկների, օրգանական գազային միացությունների, շմուլ գազի եւ ազոտի օքսիդների արտանետումներն արտահայտված են 10 % թթվածնով վառելիքային գազի հիմքով ստանդարտացմամբ եւ 0 °C եւ 1 013 միլիբար ստանդարտ պայմաններով.

բ) սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած՝ պինդ մասնիկների, օրգանական գազային միացությունների, շմոլ գազի եւ ազոտի օքսիդների E_U արտանետումները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

1) ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների դեպքում, որոնք կարող են շարունակաբար շահագործվել 50 % անվանական ջերմարդյունավետությամբ, եւ ավտոմատ բեռնվող, պինդ վառելիքով աշխատող կաթսաների դեպքում՝

$$E_U = 0,85 \times E_{U,p} + 0,15 \times E_{U,n}$$

2) ձեռքով բեռնվող, պինդ վառելիքով աշխատող այն կաթսաների դեպքում, որոնք չեն կարող շարունակաբար շահագործվել 50 % անվանական ջերմարդյունավետությամբ, եւ պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում՝

$$E_U = E_{U,n}$$

որտեղ՝

ա) $E_{U,p}$ -ն 30 % կամ 50 % անվանական ջերմարտադրությամբ չափվող համապատասխան պինդ մասնիկների, օրգանական գազային միացությունների, շմոլ գազի եւ ազոտի օքսիդների արտանետումներն են, եթե կիրառելի է,

բ) $E_{U,n}$ -ն անվանական ջերմարտադրությամբ չափվող համապատասխան պինդ մասնիկների, օրգանական գազային միացությունների, շմոլ գազի եւ ազոտի օքսիդների արտանետումներն են,

- գ) պինդ մասնիկների արտանետումները չափվում են գրավիմետրական մեթոդով՝ բացառությամբ այն պինդ մասնիկների, որոնք առաջանում են օրգանական գազային միացություններից, երբ վառելիքային գազը խառնվում է մթնոլորտային օդին.
- դ) ազոտի օքսիդների արտանետումները հաշվարկվում են ազոտի մոնօքսիդի եւ ազոտի երկօքսիդի գումարով եւ արտահայտվում են ազոտի երկօքսիդով:
-

ՀԱՎԵԼՎԱԾ IV**Շուկայի վերահսկողության նպատակներով
իրականացվող ստուգման ընթացակարգը**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ կատարելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանության ստուգման հետեյալ ընթացակարգը՝

- 1) անդամ պետությունների մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավորի փորձարկում: Միավոր արտադրատեսակը փորձարկվում է մեկ կամ մի քանի վառելիքով, որոնց բնութագրերը նույն սանդղակում են ներառված, ինչ այն վառելիքը, որը III հավելվածին համապատասխան չափումներ իրականացնելու նպատակով օգտագործվել է արտադրողի կողմից.
- 2) մոդելը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
 - ա) տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները համապատասխանում են II հավելվածով սահմանված պահանջներին, եւ
 - բ) 2-րդ աղյուսակում թվարկված մոդելների պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս բոլոր այդ պարամետրերի մասով համապատասխանություն.
- 3) եթե 2-րդ կետի «ա» ենթակետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր մյուս համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող: Եթե 2-րդ կետի «բ» ենթակետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները

փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք, ընտրված երեք լրացուցիչ մասերը կարող են ընտրվել մեկ կամ ավելի համարժեք մոդելներից, որոնք արտադրողի տեխնիկական փաստաթղթերում թվարկվել են որպես համարժեք արտադրանք:

- 4) մոդելը համարվում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե համապատասխան մոդելի՝ երեք լրացուցիչ միավորների համար 2-րդ աղյուսակում նշված պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս համապատասխանություն բոլոր այդ պարամետրերի մասով:
- 5) եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր մյուս համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմիններն այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, տրամադրում են փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ:

Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են III հավելվածով սահմանված՝ չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածով սահմանված՝ ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները վերաբերում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգմանը եւ մատակարարի կամ ներմուծողի կողմից չեն օգտագործվում որպես առավելագույն թույլատրելի շեղումներ՝ տեխնիկական փաստաթղթերում առկա արժեքները սահմանելու համար:

Աղյուսակ 2

արամետրերը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետություն η_s	Սահմանված արժեքը ⁽¹⁾ միավորի հայտարարված արժեքից ցածր է ոչ ավելի, քան 4 %-ով:
Պինդ մասնիկների արտանետումները	Սահմանված արժեքը ⁽¹⁾ միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 9 մգ/մ ³ -ով:
Օրգանական գազային միացությունների արտանետումները	Սահմանված արժեքը ⁽¹⁾ միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 7մգ/մ ³ -ով:
Շմոլ գազի արտանետումները	Սահմանված արժեքը ⁽¹⁾ միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 30մգ/մ ³ -ով:
Ազոտի օքսիդների արտանետումները	Սահմանված արժեքը ⁽¹⁾ միավորի հայտարարված արժեքից բարձր է ոչ ավելի, քան 30մգ/մ ³ -ով:

¹ Սահմանված արժեքների թվավաբանական միջինը՝ 3-րդ կետով սահմանված կարգով փորձարկման ենթարկված երեք լրացուցիչ միավորների դեպքում:

*ՀԱՎԵԼՎԱԾ V***6-րդ հոդվածում նշված կողմնորոշիչ հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին պինդ վառելիքով աշխատող կաթսաների համար շուկայում հասանելի լավագույն տեխնոլոգիաների համար կողմնորոշիչ հենանիշերը բերված են ստորև: Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին միայն պինդ վառելիքով աշխատող ոչ մի կաթսա չի համապատասխանել 1-ին եւ 2-րդ կետերով նշված բոլոր արժեքներին: Պինդ վառելիքով աշխատող մի քանի կաթսա համապատասխանում է այս արժեքներից մեկին կամ մի քանիսին՝

1. սենքի սեզոնային տաքացման էներգաարդյունավետության համար՝ 96 % պինդ վառելիքով աշխատող, համակցված արտադրությամբ կաթսաների դեպքում, 90 % կոնդենսացիոն կաթսաների դեպքում եւ 84 % պինդ վառելիքով աշխատող այլ կաթսաների դեպքում.

2. սենքի սեզոնային ջեռուցման արտանետումների համար՝

ա) 2մգ/մ^3 կենսազանգվածով աշխատող կաթսաների պինդ մասնիկների դեպքում, 10մգ/մ^3 հանաժո վառելիքով աշխատող կաթսաների դեպքում,

բ) 1մգ/մ^3 օրգանական գազային միացությունների դեպքում,

գ) 6մգ/մ^3 շնոլ գազի դեպքում,

դ) 97մգ/մ^3 կենսազանգվածով աշխատող կաթսաների ազոտի օքսիդների համար, 170մգ/մ^3 հանաժո վառելիքով աշխատող կաթսաների դեպքում:

1-ին եւ 2-րդ կետերի «ա»-«դ» ենթակետերում նշված հենանիշերը պարտադիր կերպով չեն ենթադրում, որ այդ արժեքների համակցությունը հասանելի է միայն պինդ վառելիքով աշխատող կաթսայի համար: Լավ համակցության օրինակ է 81% սենքի սեզոնային ջեռուցման էներգաարդյունավետությամբ գոյություն ունեցող մոդելը եւ 7մգ/մ^3 պինդ մասնիկների, 2մգ/մ^3 օրգանական գազային միացությունների, 6մգ/մ^3 շմոլ գազի եւ 120մգ/մ^3 ազոտի օքսիդի սենքի սեզոնային ջեռուցման արդյունքում առաջացած արտանետումները:
